ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 22 >> դեկտեմբերի 2014 թվականի N 354-Ա **ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ կետի, 10-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 17-ի <<Քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում փոփոխություններ կատարելուն համաձայնություն տալու մասին>> N 1192-Ա որոշումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) բարձրագույն պաշտոնների խմբի (67-1.1-1, 67-1.2-1) անձնագրերի <<VI. Գիտելիքները և հմտությունները>> բաժնի <<կամ մինչև 2015 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ>> բառերը փոխարինել <<կամ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն երեք տարին՝ ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում>> բառերով.
2. Աշխատակազմի գլխավոր պաշտոնների խմբի՝

1) ստորաբաժանման ղեկավարների պաշտոնների (67-2.1-2, 67-2.1-3, 67-2.1-4, 67-2.1-5, 67-2.1-7, 67-2.1-10, 67-2.1-11, 67-2.2-10, 67-2.2-13, 67-2.2-14, 67-2.2-19,

67-2.2-20, 67-2.2-22, 67-2.2-30, 67-2.2-31, 67-2.2-34, 67-2.2-35, 67-2.2-37, 67-2.2-38, 67-2.2-39, 67-2.2-40, 67-2.2-41, 67-2.2-42, 67-2.2-44, 67-2.2-45, 67-2.2-46, 67-2.2-47, 67-2.2-48, 67-2.2-49, 67-2.2-50, 67-2.3-29, 67-2.3-30, 67-2.3-31, 67-2.3-32, 67-2.3-33) անձնագրերի <<VI. Գիտելիքները և հմտությունները>> բաժնի <<կամ առնվազն հինգ տարվա քաղաքացիական ծառայության ստաժ և քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան, կամ վերջին չորս տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ համայնքային ծառայության գլխավոր պաշտոնի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ վերջին տասը տարվա ընթացքում առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2015 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ>> բառերը փոխարինել <<կամ առնվազն երեք տարվա քաղաքացիական ծառայության ստաժ և քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ համայնքային ծառայության գլխավոր պաշտոնի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ վերջին տասը տարվա ընթացքում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, որից առնվազն մեկ տարին ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում, կամ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն մեկ տարին ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում>> բառերով,

2) սույն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում չընդգրկված այլ պաշտոնների (67-2.3-12, 67-2.3-13,. 67-2.3-14, 67-2.3-16, 67-2.3-17, 67-2.3-20, 67-2.2-33, 67-2.2-36, 67-2.3-38, 67-2.3-39, 67-2.3-40, 67-2.3-41, 67-2.3-42, 67-2.2-43, 67-2.3-43, 67-2.3-44, 67-2.3-45, 67-2.3-46, 67-2.3-47, 67-2.3-48, 67-2.3-49, 67-2.3-50, 67-2.3-51, 67-2.3-52, 67-2.3-53, 67-2.3-54) անձնագրերի <<VI. Գիտելիքները և հմտությունները>> բաժնի <<կամ առնվազն հինգ տարվա քաղաքացիական ծառայության ստաժ և քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան, կամ վերջին չորս տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ համայնքային ծառայության գլխավոր պաշտոնի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ վերջին տասը տարվա ընթացքում առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2015 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ>> բառերը փոխարինել <<կամ առնվազն երեք տարվա քաղաքացիական ծառայության ստաժ և քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ համայնքային ծառայության գլխավոր պաշտոնի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ վերջին տասը տարվա ընթացքում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ>> բառերով.

3. Աշխատակազմի առաջատար պաշտոնների խմբի (67-3.1-2, 67-3.1-3, 67-3.1-4, 67-3.1-7, 67-3.1-8, 67-3.1-9, 67-3.1-10, 67-3.1-11, 67-3.1-12, 67-3.1-13, 67-3.1-14, 67-3.1-15, 67-3.2-10, 67-3.2-12, 67-3.2-14, 67-3.2-23, 67-3.2-24, 67-3.2-25, 67-3.2-26, 67-3.2-27, 67-3.2-35, 67-2.3-36, 67-2.3-37, 67-3.2-38, 67-3.2-39, 67-3.2-40, 67-3.2-41, 67-3.2-42, 67-3.2-43, 67-3.2-44, 67-3.2-45, 67-3.2-46, 67-3.2-47, 67-3.2-48, 67-3.2-49, 67-3.3-5, 67-3.3-9, 67-3.3-10, 67-3.3-13, 67-3.3-15, 67-3.3-16, 67-3.3-17) անձնագրերի <<VI. Գիտելիքները և հմտությունները>> բաժնի <<առնվազն երկու տարվա ստաժ, կամ վերջին երեք տարվա ընթացքում>> բառերը փոխարինել <<առնվազն մեկ տարվա ստաժ, կամ վերջին հինգ տարվա ընթացում>> բառերով, իսկ <<կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2015>> բառերը փոխարինել <<կամ առնվազն երկու տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2020>> բառերով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 1-ից:

Ֆ.ՅՈԼԱԿՅԱՆ

Իսկ[illegible]ի հետ ճիշտ է՝